«Հաստատում եմ»
«Երևանի հենաշարժական համակարգի
խախտումներ ունեցող երեխաների հ.17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի
Տնօրենի ժ/պ Ա.Գարեգինյան

01.09.2026թ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՄԱՅՐԵՆԻ, ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՄԵՍՏ ՓԻՐՈՒՄՅԱՆ**

2026-2027

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

Մասնախմբի գործունեությունն ուղղված է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, ուսուցիչների մասնագիտական զարգացմանը, կրթության որակի բարելավմանը, առաջավոր մանկավարժական փորձի տարածմանը և սովորողների կրթական կարիքներին համապատասխան ուսուցման ապահովմանը:

Նպատակ

Ապահովել մասնախմբի գործունեության արդյունավետ կազմակերպումը, ուսումնական ծրագրերի որակյալ իրականացումը, մանկավարժական աշխատողների մասնագիտական աճը և սովորողների ուսումնառության արդյունքների բարելավումը:

Խնդիրներ

1. Համակարգել մասնախմբի անդամների մասնագիտական գործունեությունը:
2. Աջակցել պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի պահանջների արդյունավետ իրականացմանը:
3. Կազմակերպել մանկավարժական փորձի փոխանակում և փոխադարձ դասալսումներ:
4. Նպաստել ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ու ինքնակրթությանը:
5. Վերլուծել սովորողների ուսումնառության արդյունքները և մշակել բարելավման առաջարկություններ:
6. Ապահովել ուսումնական փաստաթղթերի պատշաճ վարումը:
7. Աջակցել դպրոցական և արտադպրոցական կրթադաստիարակչական ծրագրերի իրականացմանը:

Գործունեության հիմնական ուղղություններ

1. Ուսումնական գործընթացի պլանավորում և կազմակերպում:
2. Ուսումնական ծրագրերի և թեմատիկ պլանների քննարկում:
3. Սովորողների առաջադիմության և կրթական արդյունքների մշտադիտարկում:
4. Փոխադարձ դասալսումների և մեթոդական քննարկումների կազմակերպում:
5. Ուսումնամեթոդական նյութերի մշակում և քննարկում:
6. Ուսուցիչների մասնագիտական զարգացման միջոցառումների կազմակերպում:
7. Էլեկտրոնային մատյանների, ԱՈՒՊ-ների և այլ փաստաթղթերի վարման վերահսկում:
8. Կիսամյակային և տարեկան արդյունքների ամփոփում:

Մասնախմբի տարեկան աշխատանքային պլանը՝ ըստ գործունեության ոլորտների, ժամկետների և պատասխանատուների:

Ոլորտ 1. Ուսումնական գործընթացի պլանավորում և կազմակերպում

Հհ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող	Նշումներ
1.	ՄՄ տարեկան աշխատանքային պլանի քննարկում և մշակում	Օգոստոս	Առարկայական ՄՄ, ՄՄ ղեկավար, տնօրենի տեղակալ	Մշակել և քննարկել ՄՄ տարեկան աշխատանքային պլանը՝ հաշվի առնելով ուսումնական գործընթացի առաջնահերթությունները, դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները և ՄՄ առջև դրված խնդիրները: Սահմանել նախատեսվող աշխատանքների նպատակները, ժամկետներն ու ակնկալվող արդյունքները:
2.	ՄՄ նիստերի կազմակերպում և իրականացում	Ուսումնական տարվա ընթացքում	ՄՄ ղեկավար	Նիստերն իրականացնել յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթվա ընթացքում: Նախապես իրազեկել ՄՄ անդամներին, տնօրենի տեղակալին և տնօրենին նիստի անցկացման վայրի ժամի և օրակարգի մասին:
3.	Սեմինար-քննարկում «ՀՊՉ	Օգոստոսի 25-29	ՄՄ ղեկավար	Կազմակերպել սեմինար-քննարկում՝ ՀՊՉ-ով սահմանված վերջնարդյունքների, դրանց ձևավորման և գնահատման հիմնական

	վերջնարդյունքներ» թեմայով:			մոտեցումների վերաբերյալ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով վերջնարդյունքների, դասի նպատակների, բովանդակության և սովորողների ուսումնառության արդյունքների փոխկապակցվածությանը:
4.	Սահմանել օրվա դասի պլանի միասնական կառուցվածք, մշտապես ստուգել դրա առկայությունը	Օգոստոսի 25-29	ՄՄ ղեկավար	Քննարկել և սահմանել օրվա դասի պլանի միասնական կառուցվածքը՝ ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման միասնական մոտեցում ապահովելու նպատակով: Պարբերաբար վերահսկել դասի պլանների առկայությունը և համապատասխանությունը սահմանված պահանջներին, անհրաժեշտության դեպքում տրամադրել մասնագիտական խորհրդատվություն և առաջարկություններ:
5.	Առարկայական ծրագրերի քննարկում, վերանայում և լրամշակում՝ ըստ անհրաժեշտության	Օգոստոս 25-29	Առարկայական ՄՄ, ՄՄ ղեկավար,	Ուսումնասիրել և քննարկել առարկայական ծրագրերը, անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան ճշգրտումներ և լրացումներ՝ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման և սահմանված պահանջների ապահովման նպատակով:
6.	Թեմատիկ պլանների վերանայում, քննարկում և հաստատում	Օգոստոս-սեպտեմբեր	Առարկայական ՄՄ անդամներ և ղեկավար	Վերանայել և քննարկել թեմատիկ պլանները՝ հաշվի առնելով առարկայական ծրագրերի պահանջները, սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները և նախատեսված վերջնարդյունքները: Քննարկումից հետո թեմատիկ պլանները ներկայացնել և հաստատել սահմանված կարգով:
7.	Օգոստոսյան խորհրդակցության ցուցումների ներկայացում	Օգոստոս-սեպտեմբեր	ՄՄ ղեկավար	ՄՄ անդամներին փոխանցել օգոստոսյան խորհրդակցության ընթացքում ներկայացված ցուցումներն ու առաջարկությունները, քննարկել դրանց իրականացման հիմնական ուղղությունները և համապատասխան աշխատանքները ներառել ՄՄ գործունեության մեջ:
8.	Ուսումնական պլանի դպրոցական և անհատական բաղադրիչների ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկության ներկայացում տնօրենին	Օգոստոս 24-29	Առարկայական ՄՄ, ՄՄ ղեկավար	Քննարկել ուսումնական պլանի դպրոցական և անհատական բաղադրիչների ժամերի տնօրինման հարցը և ձևավորել համապատասխան առաջարկություն՝ հաշվի առնելով սովորողների կրթական կարիքները, դպրոցի հնարավորությունները և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը:
9.	Ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկության ներկայացում տնօրենին	Օգոստոս 24-29	Առարկայական ՄՄ, ՄՄ ղեկավար	Իրականացնել ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում՝ քննարկումների և առարկայական ուղղությունների կարիքների ուսումնասիրության հիման վրա: Մշակված առաջարկությունը ներկայացնել տնօրենին՝ հետագա հաստատման նպատակով:

10.	ՄՄ անդամների աշխատանքային պլանների կազմում և հաստատում	Օգոստոս-սեպտեմբեր	Առարկայական ՄՄ	ՄՄ անդամների կողմից կազմել աշխատանքային պլաններ՝ ներառելով ուսումնական և մեթոդական աշխատանքների հիմնական ուղղությունները, նախատեսվող միջոցառումները, մասնագիտական համագործակցությունը և տարվա ընթացքում իրականացվելիք աշխատանքները:
11.	ՄՄ անդամ ուսուցիչների թեմատիկ պլանների կատարողականի քննարկում	Դեկտեմբեր-հունվար Մայիս-հունիս	ՄՄ անդամներ և ղեկավար, տնօրենի տեղակալ	Քննարկել և վերլուծել ՄՄ անդամ ուսուցիչների թեմատիկ պլանների կատարողականը, ուսումնասիրել ծրագրային նյութի յուրացման ընթացքը, առաջացած դժվարությունները և հնարավոր բացթողումները, անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ՝ ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
12.	200 և ավելի ժամ բացակայած աշակերտների ցուցակի կազմում և ներկայացում տնօրինությանը (առարկայի կտրվածքով)	Մայիս	ՄՄ ղեկավար, դասավար/դասղեկներ	Ուսումնասիրել և ամփոփել 200 և ավելի ժամ բացակայություն ունեցող սովորողների վերաբերյալ տվյալներն՝ ըստ առարկաների, կազմել համապատասխան ցուցակ և սահմանված կարգով ներկայացնել դպրոցի տնօրինությանը՝ հետագա աշխատանքների կազմակերպման նպատակով:
13.	Քննական և ստուգողական առաջադրանքների մշակում և ներկայացում տնօրենին (ըստ անհրաժեշտության)	Մայիս-հունիս	ՄՄ անդամներ և ղեկավար	Մշակել քննական և ստուգողական առաջադրանքներ՝ հաշվի առնելով ուսումնական ծրագրի բովանդակությունը, սովորողների ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները և ակնկալվող վերջնարդյունքները: Քննարկել մշակված առաջադրանքները, անհրաժեշտության դեպքում լրամշակել և ներկայացնել տնօրենին:

Ոլորտ 2. Դասավանդման գործընթացի ուսումնասիրման և որակի բարելավման աշխատանքներ

Հհ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող	Նշումներ
1.	Դասի պլանների օրինակելի ձևերի մշակում և ներկայացում	Օգոստոս	ՄՄ անդամներ և ղեկավար	Մշակվել և ներկայացվել են դասի պլանների օրինակելի ձևեր՝ հաշվի առնելով դասի նպատակը, ակնկալվող վերջնարդյունքները, ուսուցման մեթոդները, սովորողների ակտիվ մասնակցությունը և գնահատման ձևերը: Նպատակն է ապահովել դասի պլանավորման միասնական և արդյունավետ մոտեցում:
2.	Ուսուցիչների կողմից դասի պլանների մշակման գործընթացի մշտադիտարկում	Հոկտեմբեր Փետրվար	ՄՄ ղեկավար	Մշտադիտարկման ընթացքում ուշադրություն դարձնել դասի պլանների առկայությանը, սահմանված միասնական կառուցվածքին համապատասխանությանը, նպատակի և վերջնարդյունքների հստակ ձևակերպմանը, կիրառվող մեթոդների նպատակահարմարությանը և սովորողների տարիքային ու անհատական առանձնահատկությունների հաշվառմանը:
3.	Անհատական մասնագիտական վերահսկողություն	Հոկտեմբեր	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄՄ ղեկավար	Սկսնակ ուսուցիչներին ցուցաբերել անհատական մասնագիտական աջակցություն՝ դասի պլանավորման, դասի կառուցվածքի,

	սկսնակ ուսուցիչների մոտ			մեթոդների ընտրության, ժամանակի արդյունավետ կառավարման, սովորողների ներգրավման և գնահատման գործընթացի վերաբերյալ: Արդյունքները քննարկել ուսուցչի հետ և տրամադրել հետադարձ կապ:
4.	«Այլընտրանքային հաղորդակցում» առարկա դասավանդող ուսուցիչների աշխատանքների անհատական վերահսկողության իրականացում:	Հոկտեմբեր 1-17	ՄՄ ղեկավար	Իրականացնել «Այլընտրանքային հաղորդակցում» առարկան դասավանդող ուսուցիչների անհատական աշխատանքների ուսումնասիրություն՝ ուշադրություն դարձնելով սովորողների անհատական կարիքներին համապատասխան հաղորդակցման միջոցների, տեսողական և այլընտրանքային օժանդակ միջոցների կիրառմանը, սովորողների մասնակցությանը և առաջընթացին:
5.	Ուսումնական նախագծերի, խմբակների իրականացման ընթացքի մշտադիտարկում	Հոկտեմբեր 12-16	ՄՄ ղեկավար	Մշտադիտարկել ուսումնական նախագծերի և խմբակների իրականացման ընթացքը, դրանց համապատասխանությունը նախատեսված նպատակներին, սովորողների ներգրավվածության աստիճանը և վերջնարդյունքները: Անհրաժեշտության դեպքում ներկայացնել մեթոդական առաջարկություններ:
6.	Սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին ՈՒԴԱՏՊ-ով պլանավորված և իրականացված աշխատանքների արդյունքների վերլուծություն	Հոկտեմբեր ի 26-30	ՄՄ ղեկավար	Վերլուծել սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված և իրականացված աշխատանքները, արձանագրել կատարված աշխատանքները, ձեռքբերումները և առաջացած դժվարությունները: Վերլուծության հիման վրա նախանշել հետագա աշխատանքների բարելավման ուղղությունները:
7.	Առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրություն՝ Մայրենի՝ 6-րդ, 7-րդ դասարաններում	Նոյեմբեր 2-30	ՄՄ ղեկավար	Մայրենի առարկայի դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրության ընթացքում ուշադրություն դարձնել սովորողների ընթերցանության, բանավոր և գրավոր խոսքի, տեքստի ընկալման, վերլուծության և ինքնուրույն արտահայտվելու կարողությունների զարգացմանը: Արդյունքները քննարկել և ներկայացնել համապատասխան առաջարկություններ:
8.	Առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրություն՝ Մայրենի՝ 5-րդ և 8-րդ, 9-րդ դասարաններում	Դեկտեմբեր 1-24	ՄՄ ղեկավար	Մայրենի առարկայի դասավանդման որակի ուսումնասիրության ընթացքում դիտարկել ուսուցման մեթոդների արդյունավետությունը, սովորողների մասնակցությունն ու ուսումնառության արդյունքները, ինչպես նաև 5-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններում առարկայական գիտելիքների և կարողությունների ձևավորման մակարդակը:
9.	Ուսումնական նախագծերի, խմբակների ընթացքի և հաշվետվողականության մշտադիտարկում	Դեկտեմբեր 14-30	ՄՄ ղեկավար	Մշտադիտարկել ուսումնական նախագծերի և խմբակների ընթացքը, ծրագրավորված աշխատանքների իրականացումը, սովորողների մասնակցությունը, աշխատանքների փաստաթղթավորումն ու հաշվետվողականությունը: Անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ

				աշխատանքների արդյունավետության բարձրացման համար:
10.	Նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին ՈՒԴԱՏՊ-ով պլանավորված և իրականացված աշխատանքների արդյունքների վերլուծություն	Դեկտեմբեր 21-30	ՄՄ ղեկավար	Վերլուծել նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված աշխատանքների կատարողականը, արձանագրել արդյունքները, բացահայտել առկա խնդիրներն ու թերությունները և նախանշել դրանց հաղթահարմանն ուղղված միջոցառումներ:
11.	Առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրություն՝ Հայրենագիտություն՝ 5-րդ դասարաններում	Հունվարի 1-24	ՄՄ ղեկավար	Հայրենագիտության 5-րդ դասարաններում ուսումնասիրել դասավանդման մեթոդների արդյունավետությունը, սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման մակարդակը, գործնական աշխատանքների կիրառումը և ուսումնառության վերջնարդյունքները:
12.	Առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրություն՝ Հայրենագիտություն՝ 6-րդ դասարաններում	Փետրվար 1-26	ՄՄ ղեկավար	Հայրենագիտության 6-րդ դասարաններում ուսումնասիրել ուսուցման և ուսումնառության ընթացքը՝ ուշադրություն դարձնելով սովորողների ակտիվ մասնակցությանը, պատմական և հասարակագիտական նյութի ընկալմանը, ինքնուրույն աշխատանքի կարողություններին և առարկայի նկատմամբ հետաքրքրվածությանը:
13.	Ուսումնական նախագծերի, խմբակների իրականացման ընթացքի մշտադիտարկում	Փետրվար 15-26	ՄՄ ղեկավար	Ուսումնական նախագծերի և խմբակների մշտադիտարկման ընթացքում ուշադրություն դարձնել նախատեսված աշխատանքների կատարմանը, սովորողների ներգրավվածությանը, գործունեության արդյունավետությանը և ստացված արդյունքների ներկայացմանը:
14.	Հունվար, փետրվար ամիսներին ՈՒԴԱՏՊ-ով պլանավորված և իրականացված աշխատանքների արդյունքների վերլուծություն	Փետրվար 24-26	ՄՄ ղեկավար	Վերլուծել հունվար և փետրվար ամիսներին ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված և իրականացված աշխատանքների արդյունքները, առանձնացնել ձեռքբերումները, դժվարությունները և բացթողումները, ինչպես նաև նախանշել հաջորդ փուլում իրականացվելիք բարելավման աշխատանքները:
15.	Առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրություն՝ Հայրենագիտություն՝ 7-րդ դասարաններում	Մարտ 10-31	ՄՄ ղեկավար	Հայրենագիտության 7-րդ դասարաններում ուսումնասիրել դասավանդման և ուսումնառության որակը՝ ուշադրություն դարձնելով սովորողների գիտելիքների կիրառմանը, պատճառահետևանքային կապերի բացահայտմանը, ինքնուրույն դատողություններին, քննարկումներին և գործնական առաջադրանքների կատարմանը:
16.	Առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրություն՝	Ապրիլ 1-30	ՄՄ ղեկավար	Հայրենագիտության 9-րդ դասարաններում ուսումնասիրել ուսումնական նյութի յուրացման մակարդակը, սովորողների վերլուծական և քննադատական մտածողությունը, ինքնուրույն

	Հայրենագիտություն՝ 9-րդ դասարաններում			աշխատանքի կարողությունները և ակնկալվող վերջնարդյունքների ապահովումը:
17.	Մարտ, ապրիլ ամիսներին ՈՒԴԱՏՊ-ով պլանավորված և իրականացված աշխատանքների արդյունքների վերլուծություն	Ապրիլ 15-30	ՄՄ ղեկավար	Վերլուծել մարտ և ապրիլ ամիսներին ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված և իրականացված աշխատանքների ընթացքն ու արդյունքները, արձանագրել դրական ձեռքբերումները, բացահայտել դժվարությունները և մշակել դրանց հաղթահարման ու աշխատանքի արդյունավետության բարձրացման առաջարկություններ:
18.	Առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրություն՝ Հայրենագիտություն՝ 8-րդ դասարաններում	Մայիս 1-16	ՄՄ ղեկավար	Հայրենագիտության 8-րդ դասարաններում ուսումնասիրել դասավանդման մեթոդների և կիրառվող առաջադրանքների արդյունավետությունը, սովորողների ուսումնառության արդյունքները, ինքնուրույն աշխատանքի և վերլուծական մտածողության զարգացման մակարդակը:
19.	Ուսումնական նախագծերի, խմբակների ընթացքի և հաշվետվողականության մշտադիտարկում	Մայիսի 3-29	ՄՄ ղեկավար	Ուսումնական նախագծերի և խմբակների վերջնական փուլում մշտադիտարկել աշխատանքների ամբողջական իրականացումը, արդյունքների ներկայացումը, հաշվետվողականության ապահովումը և սովորողների մասնակցության արդյունավետությունը: Ամփոփել ձեռքբերումներն ու առկա դժվարությունները:
20.	Բոլոր դասալսումների քննարկումներ ՄՄ անդամների և տնօրինության կողմից	Տարվա ընթացքում	ՄՄ անդամներ, ղեկավար	Տարվա ընթացքում իրականացված բոլոր դասալսումների արդյունքները քննարկել ՄՄ անդամների և տնօրինության հետ՝ առանձնացնելով դասավանդման արդյունավետ փորձը, արձանագրված խնդիրներն ու բարելավման հնարավորությունները: Քննարկումների արդյունքները հաշվի առնել հետագա մեթոդական աշխատանքների պլանավորման ժամանակ:
21.	Դասալսումների արդյունքների քննարկում, վերլուծություն և մեթոդական առաջարկությունների ներկայացում	Յուրաքանչյուր դասալսումից հետ կամ առաջիկա ՄՄ նիստում	ՄՄ անդամներ, ղեկավար	Յուրաքանչյուր դասալսումից հետո ուսուցչի հետ իրականացնել անհատական մասնագիտական քննարկում՝ ներկայացնելով դասի ուժեղ կողմերը, բարելավման ենթակա ուղղությունները և գործնական առաջարկություններ: Նպատակային դասալսումների փուլի ավարտից հետո արդյունքները քննարկել ՄՄ նիստում, ամփոփել դիտարկումները և նախանշել դասավանդման որակի բարելավման հետագա քայլերը:

Ոլորտ 3. Ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ուղղված աշխատանքներ

Հհ	**Աշխատանքի բովանդակություն**	**Կատարման ժամկետ**	**Կատարող**	**Նշումներ**
1.	Մեթոդական նյութերի (համացանց, գրականություն) և	Սեպտեմբեր	ՄՄ անդամներ և ղեկավար	Ուսումնասիրվել են մեթոդական և մասնագիտական արդիական նյութեր, առաջավոր մանկավարժական փորձի օրինակներ: ՄՄ անդամների միջև

	առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրություն, փորձի փոխանակում և արդյունավետ մոտեցումների ներդրման խթանում			իրականացվել է արդյունավետ փորձի փոխանակում, քննարկվել են նոր մոտեցումների կիրառման հնարավորությունները և դրանց ներդրման արդյունավետ ուղիները:
2.	Անհատական խորհրդատվություն միջին դասարանների դասավանդման խնդիրների վերաբերյալ	Տարվա ընթացքում	ՄՄ ղեկավար	Տրամադրվել է անհատական մասնագիտական խորհրդատվություն՝ միջին դասարաններում ուսումնական գործընթացի պլանավորման, դասավանդման մեթոդների ընտրության, սովորողների ներգրավվածության և առաջացած մանկավարժական խնդիրների լուծման վերաբերյալ:
3.	Ուսուցիչների մասնագիտական էթիկայի և բարեվարքության կանոնների վերաբերյալ քննարկում	Սեպտեմբեր	ՄՄ ղեկավար	ՄՄ նիստում քննարկվել են ուսուցչի մասնագիտական էթիկայի և բարեվարքության հիմնական սկզբունքները, կարևորվել է մասնագիտական պատասխանատվության, փոխադարձ հարգանքի, համագործակցության և կրթական միջավայրում բարենպաստ հարաբերությունների ապահովումը:
4.	Մասնագիտական էթիկայի և բարեվարքության կանոնների պահպանման վերաբերյալ անհատական խորհրդատվության և հետադարձ կապի տրամադրում:	Տարվա ընթացքում	ՄՄ ղեկավար	Տարվա ընթացքում, ըստ անհրաժեշտության, ուսուցիչներին տրամադրվել է անհատական խորհրդատվություն և մասնագիտական հետադարձ կապ՝ էթիկայի և բարեվարքության կանոնների պահպանման, գործընկերային համագործակցության և մասնագիտական վարքագծի բարելավման նպատակով:
5.	Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ապահովումը միջին դասարաններում դասավանդվող առարկաների ժամերին	Հոկտեմբեր	ՄՄ անդամներ և ղեկավար	«Կլոր սեղան» քննարկման ընթացքում ուսումնասիրվել են միջին դասարաններում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման արդյունավետ եղանակները: Քննարկվել են առկա դժվարությունները, հաջողված փորձը և ուսումնական արդյունքների բարելավման հնարավորությունները:
6.	Դասավանդման նոր և/կամ արդյունավետ մեթոդների ներկայացում և քննարկում	Նոյեմբեր, Տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության	ՄՄ անդամներ և ղեկավար	«Կլոր սեղան» քննարկման շրջանակում ներկայացվել և քննարկվել են դասավանդման նոր և արդյունավետ մեթոդներ, ուսուցման ժամանակակից մոտեցումներ և դրանց կիրառման գործնական հնարավորությունները: Կարևորվել է արդյունավետ փորձի տարածումն ու ուսումնական գործընթացում դրա նպատակային կիրառումը:
7.	Մեթոդական, մանկավարժական, մասնագիտական զեկույցների կազմակերպում՝ լավագույնների ցուցադրում	Տարվա ընթացքում	ՄՄ անդամներ	ՄՄ անդամների կողմից կազմակերպվել և ներկայացվել են մեթոդական, մանկավարժական և մասնագիտական զեկույցներ: Առանձնացվել և ցուցադրվել են լավագույն աշխատանքներն ու արդյունավետ մանկավարժական փորձը, իրականացվել է մասնագիտական փորձի փոխանակում:

8.	Ուսուցիչների դասավանդած դասարաններում տարեվերջյան արդյունքների քննարկում և ամփոփում	Տարվա ընթացքում	ՄՄ անդամներ, ղեկավար	Քննարկվել և ամփոփվել են ուսուցիչների դասավանդած դասարաններում տարեվերջյան արդյունքները: Վերլուծվել են սովորողների առաջընթացը, ձեռքբերումներն ու դժվարությունները, առանձնացվել են արդյունավետ աշխատանքային մոտեցումները և նախանշվել են հաջորդ ուսումնական տարվա բարելավման հիմնական ուղղությունները:

Ոլորտ 4. Արտադասարանական և զարգացնող գործունեություն

Հհ	**Միջոցառման անունը, տեսակը** (ցերկույթ, էքսկուսիա, բաց դաս, այլ)	**Կատարման ժամկետ**	**Կատարող**	**Նշումներ**
1.	Անկախության օր /ցերեկույթ/	21.09. 2026	Ռ. Բաղդասարյան	Կազմակերպել Անկախության օրվան նվիրված հայրենասիրական ցերեկույթ՝ սովորողների մեջ հայրենիքի, պետականության և ազգային արժեքների նկատմամբ սեր ու հարգանք ձևավորելու նպատակով: Միջոցառումն իրականացնել ասմունքների, երգերի, հայրենասիրական թեմայով ներկայացումների և ստեղծագործական աշխատանքների միջոցով:
2.	Գրադարանավարի օր	07-09.10. 2026	Ա. Օհանյան	Գրադարանավարի օրվան նվիրված կազմակերպել ճանաչողական և իրազեկող աշխատանքներ՝ ընդգծելով գրադարանի և գրքի կարևորությունը սովորողների կրթության և զարգացման գործընթացում: Խրախուսել գրքերի նկատմամբ հետաքրքրությունը և ընթերցանության մշակույթի ձևավորումը:
3.	Երևանի օր	12-14.10.2026	Լ . Ալեքսանյան	Երևանի օրվան նվիրված կազմակերպել ճանաչողական միջոցառում՝ ներկայացնելով Երևանի պատմությունը, մշակութային արժեքները, տեսարժան վայրերը և քաղաքի խորհրդանիշները: Խթանել սովորողների ճանաչողական հետաքրքրությունը և հայրենի քաղաքի նկատմամբ հոգատար վերաբերմունքը:
4.	Իրավունքների իրազեկման օր /պաստառի պատրաստում/	09-13.11. 2026	ՄՄ անդամներ	Իրականացնել իրավունքների իրազեկմանն ուղղված աշխատանքներ և պատրաստել թեմատիկ պաստառներ: Սովորողներին մատչելի ձևով ներկայացնել երեխայի հիմնական իրավունքներն ու պարտականությունները, ձևավորել սեփական իրավունքները ճանաչելու և ուրիշների իրավունքները հարգելու կարողություն:
5.	Գլոբալ ընթերցանության զարգացմանը միտված՝ Իմ ստեղծած գիրքը խորագրով աշխատանքների ցուցադրություն	16-20.11. 2026	Ա. Աբրահամյան	Ընթերցանության զարգացման և գրքի հանրայնացման նպատակով կազմակերպել սովորողների ստեղծագործական աշխատանքների ցուցադրություն: Ներկայացնել ստեղծած աշխատանքները, խթանել ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը, ստեղծագործական ինքնարտահայտումը և գրքի արժևորումը:

6.	«Ամանոր է» խորագրով միջոցառում		ՄՄ անդամներ	«Ամանոր է» խորագրով կազմակերպել տոնական միջոցառում՝ ապահովելով սովորողների ակտիվ մասնակցությունը: Ներկայացնել Ամանորի ավանդույթներն ու խորհրդանիշները, կազմակերպել ստեղծագործական, երաժշտական և խաղային գործունեություն՝ ստեղծելով տոնական և համագործակցային միջավայր:
7.	Գիրք նվիրելու օր	19.02.2027	ՄՄ անդամներ	Գիրք նվիրելու օրվա շրջանակում կազմակերպել գրքի նվիրատվության և ընթերցանության խրախուսման աշխատանքներ: Կարևորել գիրքը որպես գիտելիքի, հաղորդակցության և անձի զարգացման կարևոր միջոց, խթանել սովորողների միջև գրքի փոխանակման և նվիրելու մշակույթը:
8.	Թումանյանական օրեր	15-19.02. 2027	ՄՄ անդամներ	«Թումանյանական օրերի» շրջանակում ներկայացնել Հովհաննես Թումանյանի կյանքն ու ստեղծագործական ժառանգությունը: Կազմակերպել ստեղծագործությունների ընթերցումներ, ասմունք, բեմականացումներ, նկարների և այլ աշխատանքների ցուցադրություն՝ սովորողների ստեղծագործական կարողությունները զարգացնելու նպատակով:
9.	Մայրենիի օրվան նվիրված իրազեկող դասեր և միջոցառում՝ Մեսրոպ Մաշտոցի և հայ գրերի մասին	22.02.2027	Հ. Փիրումյան	Մայրենիի օրվան նվիրված իրազեկող դասերի և միջոցառման ընթացքում ներկայացնել հայոց լեզվի և գրերի ստեղծման պատմությունը, Մեսրոպ Մաշտոցի դերը և հայ գրերի նշանակությունը: Նպաստել մայրենի լեզվի նկատմամբ սիրո, հարգանքի և պահպանման կարևորության գիտակցմանը:
10.	Սուրբ Հարության տոն/ տոնական ճաշկերույթ, սեղանների թեմատիկ ձևավորման մրցույթ ,համադպրոցական միջոցառում	29.03.2027	ՄՄ անդամներ	Սուրբ Հարության տոնին նվիրված միջոցառման ընթացքում կազմակերպել տոնական ճաշկերույթ, թեմատիկ սեղանների ձևավորման մրցույթ և ստեղծագործական աշխատանքներ: Ներկայացնել տոնի ազգային և մշակութային նշանակությունը, խթանել համագործակցությունը և ազգային ավանդույթների ճանաչումն ու պահպանումը:
11.	Հայոց ցեղասպանության հիշատակի օր՝ այցելություն հուշահամալիր, իրազեկող դաս	22-23.04. 2027	ՄՄ անդամներ	Հիշատակի օրվա շրջանակում կազմակերպել այցելություն հուշահամալիր և իրազեկող դաս: Սովորողներին ներկայացնել հիշատակի և հարգանքի մշակույթը, պատմական հիշողության պահպանման կարևորությունը և հայրենասիրական արժեքները:
12.	Քաղաքացու օր միջոցառում-ցերեկույթ	25-30.04. 2027	Լ . Ալեքսանյան	Քաղաքացու օրվան նվիրված միջոցառում-ցերեկույթի ընթացքում ներկայացնել քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները, հասարակության մեջ պատասխանատու և ակտիվ մասնակցության կարևորությունը: Կազմակերպել սովորողների մասնակցությամբ ստեղծագործական և ճանաչողական աշխատանքներ:

13.	Էքսկուրսիաներ	Նոյեմբեր, մարտ, ապրիլ, մայիս	ՄՄ անդամներ	Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել ճանաչողական և կրթական էքսկուրսիաներ՝ սովորողների հետաքրքրությունները, սոցիալական հմտությունները և ճանաչողական կարողությունները զարգացնելու նպատակով: Էքսկուրսիաների վայրերն ընտրել՝ հաշվի առնելով ուսումնական նպատակները, սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Ոլորտ 5. Ուսումնական միջավայրի և նյութատեխնիկական ապահովում

Հհ	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետ**	**Կատարող**	**Նշումներ**
1.	Ուսուցողական և թեմատիկ խաղերի պատրաստում	Սեպտեմբեր-մայիս	ՄՄ անդամներ	Պատրաստել ուսուցողական, զարգացնող և թեմատիկ խաղեր՝ հաշվի առնելով դասավանդվող առարկաների բովանդակությունը, սովորողների տարիքային առանձնահատկություններն ու կրթական կարիքները: Խաղերը կիրառել ուսումնական նյութի ամրապնդման, սովորողների ակտիվ մասնակցության և գործնական հմտությունների զարգացման նպատակով:
2.	Պաստառների պատրաստում	Սեպտեմբեր-մայիս	ՄՄ անդամներ	Ստեղծել թեմատիկ, ուսուցողական և տեղեկատվական պաստառներ՝ դասապրոցեսում տեսողական նյութի կիրառումն ապահովելու նպատակով: Պաստառները պարբերաբար թարմացնել՝ ըստ ուսումնասիրվող թեմաների և ուսումնական կարիքների:
3.	Դասասենյակների ձևավորում	Օգոստոս-սեպտեմբեր, տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության	ՄՄ անդամներ	Դասասենյակների ուսումնական միջավայրը ձևավորել՝ ապահովելով սովորողների համար հարմարավետ, գրավիչ, անվտանգ և ուսուցումը խթանող պայմաններ: Ձևավորման ընթացքում հաշվի առնել առարկայական առանձնահատկությունները և սովորողների ակտիվ մասնակցության հնարավորությունները:
4.	Մեթոդական հավաքածուի ստեղծում (տեսադասեր, ֆոտոալբոմներ, զննական պարագաներ և այլ ինքնաշեն դիդակտիկ նյութեր):	Սեպտեմբեր-մայիս	ՄՄ անդամներ	Ստեղծել և համակարգել մեթոդական ու դիդակտիկ նյութերի միասնական հավաքածու՝ ներառելով տեսադասեր, ֆոտոալբոմներ, զննական պարագաներ, քարտեր, աշխատանքային նյութեր և այլ ինքնաշեն միջոցներ: Հավաքածուն համալրել տարվա ընթացքում և օգտագործել ուսուցիչների մասնագիտական փորձի փոխանակման ու դասերի արդյունավետության բարձրացման նպատակով:

Մասնախմբի ղեկավար՝ **Համեստ Փիրումյան**

01.09.2026